թիւնը Ալեքսանդրապոլի Ռազմա–Յեղափոխական կոմիտէն է, որին արդէն ճանաչել է ամբողջ երկիրը և որը պահանջում է Երևանի կառավարութիւնից էլ անյապաղ ճանաչել իր իշխանութիւնը՝ սպառնալով, հակառակ պարագային, ընդդիմացողներին պատժել յեղափոխական ժամանակի օրէնքներով:

Կառավարութիւնը տեսնելով, որ բոլոր ճիգերն անցան ապարդիւն, ապստամբների դէմ շարժեց զինուած ուժեր: Կանոնաւոր զօրամասերին միացան ամէն կողմից հասնող կամաւորական խմբեր: Մայիս 13–ի լուսաբացին Անի և Աղին կայարանների միջև, Մուսայէլեանի զրահապատ գնացքը յարձակուեց կառավարական զօրքերի վրա: Տեղի ունեցաւ տաք կռիւ, որի ընթացքում ապստամբներից վիրաւորուեց 6 հոգի, որոնց մէջ և Մուսայէլեանի օգնական սպայ Եւանդուլեանը: Զրահապատը չդիմացաւ և փախուստի դիմեց՝ ճանապարհի կամուրջները պայթեցնելու փորձեր անելով:

Այս անյաջող կռուից յետոյ Ռազմա–Յեղափոխական կոմիտէի ներքին գործոց կոմիսար Ա. Մելքոնեանը ուղիղ հեռագրաթելով դիմեց Երևան, և հետևեալ բնորոշ խօսակցութիւնը տեղի ունեցաւ նրա և ներքին գործոց նախարարի օգնական Ս. Թորոսեանի միջև.

Ա. Մելքոնեան. — Ես՝ բժ. Արտաշէս Մելքոնեանս առաջարկում եմ կարգադրել դադարեցնել ռազմական գործողութիւնները, որպէսզի կողմերը կարողանան խաղաղ հանդամանքներում համաձայնութեան գալ մի քանի ընդհանուր շատ կարևոր հարցերում:

Ս. Թորոսեան. — Մենք ձեզ կողմ չենք ճանաչում, այլ մի խումբ աւանտիւրիստներ, որոնք դաւաճանելով հայ ժողովրդին՝ խառնակութիւններ են սերմանում: Մենք գիտենք, որ ձեզ հետ չէ նաև Ալեքսանդրապոլի զօրքը: Ձեզ՝ մի խումբ բախտախնդիրներիդ հետ՝ վարուելու ենք իբրև խառնակիչների: Արդէն գիտենք, որ դուք ջարդել էք ու նեղն ընկած՝ խաղաղութեան մասին էք խօսում: Դուք, պարոն Մելքոնեան, իբրև պարլամենտի անդամ կրկնակի դաւաճանութիւն էք գործում և արժանի հատուցումը կը ստանաք: Ձեզ համար փրկութեան մի միջոց կայ — անձնատուր լինել Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան և նրա դթութեան դիմել:

Ա. Մելքոնեան. — Ես խօսում եմ իբրև միջնորդ*) ձեր և Ալեքսանդրապոլի միջև, ուր յայտարարուած է սովետական իշխանութիւն և որի կողմն են Կարսի և Սարըղամիշի զօրքերը: Գիւղացիական դանդուածները բռնուած են քաղաքացիական կռուով, և ես այժ չունեմ, անզօր եմ անխուսափելի արիւնհեղութիւնների առաջն առնելու: Որպէսզի ընդհանուր լեզու գտնենք և խուսափենք աւելորդ արիւնհեղութիւնից, անհրաժեշտ է, որ դադարեցուն ռազմական գործողութիւնները և երկու կողմից այժ գործադրենք ելք գտնելու համար:

Ս. Թորոսեան. — Կարսից և Սարըղամիշից մի շարք հեռագիրներ ունենք. այնտեղ ամբողջ զօրքը Հայաստանի Հանրապետութեան կառավա-

*) Ա. Մելքոնեանը սուտ էր խօսում. «Արմենկոմը, գրում է Շ. Ամիրխանեանը իր «Մայիսեան Ապստամբութիւնը Հայաստանում» գրքում (109 էջ), Ալեքսանդրապոլ ուղարկեց իր երկու լիազօր անդամներին՝ ընկ. ընկ. Դ. Տէր–Սիմոնեանին և Ա. Մելքոնեանին՝ ծանօթանալու իրերի դրութեանը տեղում և սանկցիա տալու իշխանութեան դրամանը, եթէ դա անհրաժեշտ լինի»: